FOOTBALL FEDERATION OF ARMENIA
ՀՖՖ
ՀՖՖ ԿՈՒՄԲԵՐԻ ԶՐՈՒՅՑԱԳՐՔԱՅ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
2021
NITA

ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2021

ՀՖՖ Արտոնագրման բաժին
Սեպտեմբեր 2021թ.

Հարգելի բարեկամ,

ՀՖՖ Արտոնագրման բաժինը Ձեզ է ներկայացնում ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծության իններորդ հրատարակությունը 2020/2021 թվականների մրցաշրջանի և 2020 թվականի ֆինանսական տարվա վերաբերյալ: Այն ամբողջովին ներկայացնում է հայկական պրոֆեսիոնալ ակումբային ֆուտբոլը՝ ներառելով VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների վերաբերյալ համեմատական վերլուծություն: Այս փաստաթուղթը հրատարակվում է իններորդ տարին անընդմեջ և շարունակում է հանդիսանալ ամենամյա սկզբունքով թողարկվող միակ փաստաթուղթը, որը պարունակում է հայկական ակումբների և հայկական ֆուտբոլի վերաբերյալ ֆինանսական, ենթակառուցվածքային, կադրային, իրավական և այլ կարևոր տեղեկատվություն:

Զեկույցն իր մեջ ներառում է 2020/2021 թվականների մրցաշրջանի և 2020 թվականի ֆինանսական տարվա ընթացքում հավաքագրված ողջ տեղեկատվությունը, որն ակումբները ներկայացրել են ՀՖՖ ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացի շրջանակներում:

Ակումբների արտոնագրման համեմատական զեկույցը իրականություն է դարձել մեր ակումբների կողմից ցուցաբերած աջակցության և պատրաստակամության շնորհիվ, որոնք պատշաճ կերպով տրամադրել են զեկույցի մեջ ներառված համապատասխան տեղեկատվությունը: Օգտվելով առիթից՝ մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի բոլոր ակումբներին իրենց աջակցության և սույն զեկույցի կազմմանը մասնակցություն ցուցաբերելու համար:

Զեկույցում ներկայացված են նաև ՀՖՖ կողմից մշակված նոր երկարաժամկետ ռազմավարական ծրագրի շրջանակներում արդեն իսկ գրանցած ձեռքբերումները, մասնավորապես՝ նոր ենթակառուցվածքների կառուցումը, նոր համագործակցությունները և այլն:
Վստահ ենք, որ ՀՖՖ ակումբների արտոնագրման «Համեմատական վերլուծություն» զեկույցն անկասկած կնպաստի հայկական ֆուտբոլում թափանցիկության մակարդակի բարձրացմանն, ինչն էլ, իր հերթին, հանդիսանում է ՀՖՖ քաղաքականության անկյունաքարերից մեկը:

Արթուր Ազարյան
ՀՖՖ Գլխավոր քարտուղար
ՀՖՖ Ակումբների արտոնագրման և վերահսկողության նախագծի ղեկավար

ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՖՖ Ակումբների արտոնագրման համեմատական վերլուծությունը շարունակում է մնալ իր տեսակի մեջ հայկական ֆուտբոլին վերաբերող միակ ուսումնասիրությունը՝ մի կողմից հանդիսանալով ակումբային ֆուտբոլի ուղեցույցը, մյուս կողմից՝ կատարելով ժամանակակից ֆուտբոլի կարևոր միտումների արձանագրման և փաստաթղթավորման գործընթացը: Վերլուծությունը, հիմնվելով փաստերի վրա, ներկայացնում է անցնող մրցաշրջանում արձանագրված, և՛ դրական, և՛ բացասական միտում ունեցող իրադարձությունները: ՀՖՖ Արտոնագրման բաժինը սույն վերլուծությունը կազմել է ՀՖՖ ակումբների կողմից ներկայացված արտոնագրման 5 չափանիշների (մարզական, կադրային և վարչական, իրավական, ենթակառուցվածքային և ֆինանսական) հիման վրա՝ պահպանելով անկախության և գաղտնիության պատշաճ մակարդակը:

Վերլուծության հիմնական առանցքն են կազմում նախորդ 17 մրցաշրջանների ընթացքում ՀՖՖ Ակումբների արտոնագրման գործընթացի մասին տեղեկատվությունը, կայացված որոշումների համեմատությունները՝ ըստ Ազգային, Առաջին խմբի, ՈւԵՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի Կանանց Չեմպիոնների լիգայի արտոնագրման գործընթացների, մարզասերների՝ ներքին առաջնություններին խաղերի հաճախելիությունը, VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի հանդիպումներին մասնակցած ֆուտբոլիստների տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև ակումբների ֆինանսական հաշվետվությունների վրա հիմված տեղեկությունները եկամուտների ու ծախսերի վերաբերյալ:

2021/2022 մրցաշրջանի Ազգային արտոնագիր ստանալու համար դիմել է 11 ակումբ: VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2021/2022 մրցաշրջանին մասնակցելու իրավունք ընձեռող արտոնագիր ստացել են բոլոր 11 ակումբները:

ՀՀ ֆուտբոլի Առաջին խմբի 2021/2022թթ. առաջնության արտոնագիր ստանալու համար դիմել էին 4 ակումբներ: Առաջին խմբի 2020/2021թթ. առաջնությունում հանդես գալու իրավունք տվող արտոնագիր է ստացել 2 ակումբ՝ «Լեռնային Արցախ» ՖԱ-ն և «Նորավանք» ՍԱ-ն: Ակումբների արտոնագրման կոմիտեն մերժել է 2 ակումբների՝ «Օնոր» ՖԱ-ի և «Վաչիկ ՂՏ» ՖԱ-ի արտոնագրերը:

2021/2022 մրցաշրջանի ՈԵՖԱ-ի արտոնագիր ստանալու համար դիմել է 7 ակումբ: 6 ակումբներ՝ «Արարատ» ՖԱ-ն, «Արարատ-Արմենիա» ՖԱ-ն, «Ալաշկերտ» ՖԱ-ն, «Նոա» ՖԱ-ն, «Փյունիկ» ՖԱ-ն և «Ուրարտու» ՖԱ-ն բավարարել են ՈւԵՖԱ-ի արտոնագիր ստանալու համար սահմանված չափանիշները և ստացել են 2021/2022 մրցաշրջանում եվրագավաթներում հանդես գալու իրավունք ընձեռող արտոնագիր: «Շիրակ» ՖԱ-ի ՈՒԵՖԱ-ի արտոնագիրը մերժվել է ակումբի կողմից սահմանված ժամկետներում արտոնագրման համար պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու պատճառով:

2021/2022 մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի Կանանց Չեմպիոնների Լիգայի արտոնագիր ստանալու համար դիմել է 2 ակումբ՝ «Ալաշկերտ» ՖԱ-ն և «Հայասա» ՖԱ-ն: Երկու ակումբներն էլ ստացել են ՈՒԵՖԱ-ի Կանանց Չեմպիոնների Լիգայի 2021/2022 մրցաշրջանին մասնակցելու իրավունք ընձեռող արտոնագիր:

FOOTBALL FEDERATION OF ARMENIA
ՀՖՖ
FOOTBALL FEDERATION OF ARMENIA
ՀՖՖ
UEFA
2
Առաջին խմբի առաջնության արտոնագիր
11
Ազգային արտոնագիր
6
ՈՒԵՖԱ-ի արտոնագիր

2004-2021/2022 թթ. ՀՖՖ Ակումբների ստացած, մերժված և հետ կանչված Ազգային արտոնագրեր



2009-2021/2022 թթ. ՀՖՖ Ակումբների ստացած և մերժված ՈՒԵՖԱ-ի արտոնագրեր



2020/2021թթ. և 2021/2022թթ. ՀՖՖ Ակումբների ստացած և մերժված Առաջին խմբի արտոնագրեր



ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Անցկացնելով համեմատականներ VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2020/2021 մրցաշրջանի և նախորդ մրցաշրջանների հաճախելիության ցուցանիշների միջև՝ ակնհայտ է դառնում, որ երկրպագուների ընդհանուր թիվը նվազել է: Երկրպագուների ընդհանուր թվի նվազումը մեծամասամբ կապված է արտակարգ և ռազմական դրություններով պայմանավորված VBET ՀՊԼ-ի աշնանային հատվածի հանդիպումները առանց հանդիսականների կամ սահմանափակ քանակի հանդիսականներով անցկացնելու որոշումների հետ: Եթե հիմք ընդունենք 2020/2021 մրցաշրջանի 1 խաղի միջին հաճախելիության ցուցանիշը՝ 518 հանդիսական(հաշվի չառնելով առանց հանդիսականների կամ սահմանափակ քանակի հանդիսականներով անցկացված հանդիպումները), ապա կտեսնենք, որ 2019/2020 մրցաշրջանի (1 խաղին՝ միջինը 387 հանդիսական) համեմատ այս ցուցանիշը աճել է: Նախորդ մրցաշրջանի համեմատ VBET ՀՊԼ-ի հանդիպումների միջին հաճախելիությունը ավելացել է 131 հանդիսականով կամ 33.85 %-ով: Այս ցուցանիշը լավագույն է վերջին 4 մրցաշրջանների համար:

Սեփական հարկի տակ հանդիպումների ժամանակ երկրպագուների ամենամեծ բանակը ունեցել է Երևանի «Ուրարտու» ֆուտբոլային ակումբը, որի տնային հանդիպումները 2020/2021 մրցաշրջանում մարզադաշտից դիտել է 9100 հանդիսական (միջինը 1 խաղում՝ 1138 հանդիսական): Հաճախելիության համեմատաբար բարձր ցուցանիշ է գրանցել նաև «Փյունիկ» ՖԱ-ն: Երևանյան թիմի տնային հանդիպումներին ներկա է եղել ընդհանուր 4200 հանդիսական կամ միջինը՝ 840 հանդիսական:

Տնային հանդիպումերին ամենից քիչ հաճախելիություն է ունեցել «Շիրակ» ֆուտբոլային ակումբը՝ 810 հանդիսական (միջինը՝ 135 հանդիսական): Հատկանշական է, որ «Շիրակ» ֆուտբոլային ակումբը նախորդ մրցաշրջանում հաճախելիության ցուցանիշով առաջատարն էր: «Շիրակ» ֆուտբոլային ակումբի հաճախելիության ցուցանիշների կտրուկ նվազումը մեծապես կախված է ակումբի մրցելույթների վատթարացմամբ: «Շիրակ» ֆուտբոլային ակումբից հետո հաճախելիության վատագույն ցուցանիշն ունի «Ալաշկերտ» ՖԱ-ն՝ 1170 հանդիսական (միջինը՝ 234 հանդիսական):

Բարձրացել է նաև VBET Հայաստանի Գավաթի 2020/21 թթ. խաղարկության միջին հաճախելիության ցուցանիշը: Վերջինս 2019/20 թթ. կազմում էր 304 հանդիսական, սակայն այս մրցաշրջանում այդ ցուցանիշը կազմել է 551 հանդիսական: VBET Հայաստանի Գավաթի 2020/21 թթ. խաղարկության հաճախելիության ցուցանիշի աճի «մեղավորը» եզրափակիչ հանդիպումն է: VBET Հայաստանի Գավաթի 2020/21 թթ. խաղարկության եզրափակիչ հանդիպմանը ներկա է եղել 4000 հանդիսական, որը կազմել է VBET Հայաստանի Գավաթի խաղարկության ընդհանուր հանդիսականների թվի 56%-ը: VBET Հայաստանի Գավաթի 2020/21 թթ. խաղարկության հանդիպումներին ներկա է եղել ընդհանուր 7170 հանդիսական:

2020/2021 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների տնային հանդիպումների հաճախելիության ցուցանիշներ



2020/2021 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների տնային հանդիպումների միջին հաճախելիության ցուցանիշներ



VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2016/2017-2020/2021 մրցաշրջանների միջին հաճախելիության ցուցանիշներ



ARARAT
VBET
17

ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ ԵՎ ԼԵԳԻՈՆԵՐՆԵՐ

Հաշվետվության այս հատվածում ներկայացված է VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ֆուտբոլիստների տարիքային համեմատական վերլուծությունը:

Փյունիկ	24,00 տարեկան
Շիրակ	24,08
Ուրարտու	24,37
Վան	24,47
Արարատ-Արմենիա	25,16
Լոռի	25,31
Նոա	25,32
Գանձասար-Կապան	25,64
Արարատ	26,91
Ալաշկերտ	27,46

2020/2021 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի մասնակցել է (հայտավորված է եղել առնվազն առաջնության 1 խաղի) ընդհանուր 339 ֆուտբոլիստ: Առաջնությանը մասնակցած 398 ֆուտբոլիստներից 177-ը եղել են լեգիոներներ (ներառյալ ԵԱՏՄ երկրներից ֆուտբոլիստները): 2019/2020 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայում հանդես է եկել կրկին 177 լեգիոներ ֆուտբոլիստ: Սակայն 2019/2020 մրցաշրջանի համեմատ նվազել է լեգիոներ ֆուտբոլիստների տեսակարար կշիռը ֆուտբոլիստների ընդհանուր թվի մեջ՝ 52,21-%-ի փոխարեն կազմելով 44,47%: Սա պայմանավորված է մեծամասամբ նրանով, որ 2020/2021 մրցաշրջանում գործել է լեգիոներ ֆուտբոլիստների սահմանափակում: Հայտավորած արտասահմանցի ֆուտբոլիստների քանակով առաջատարը «Նոա» ֆուտբոլային ակումբն է՝ 27 լեգիոներ: «Նոա» ՖԱ-ին հաջորդում է «Լոռի» ՖԱ-ն, որի կազմում 2020/2021 մրցաշրջանում հայտավորված է եղել 24 լեգիոներ: Ամենաքիչ քանակով լեգիոներներներներ հանդես են եկել «Գանձասար-Կապան» ՖԱ-ում՝ 5 լեգիոներ ֆուտբոլիստ և «Շիրակ» ՖԱ-ում՝ 6 լեգիոներ ֆուտբոլիստ:

2020/2021 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ֆուտբոլիստների միջին տարիքը 25,27 է: Նախորդ առաջնությունում ֆուտբոլիստների միջին տարիքը գրեթե նույն էր՝ 25,32:

2020/2021 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի թիմերից ամենաերիտասարդ կազմը ունեցել է «Փյունիկ» ՖԱ-ն: «Փյունիկ» ՖԱ-ի ֆուտբոլիստների միջին տարիքը եղել է 24 տարեկան: 2020/2021 մրցաշրջանում «Փյունիկ» ՖԱ-ի կազմում հանդես է եկել մինչև 25 տարեկան 30 ֆուտբոլիստ:

Երկրորդ «ամենաերիտասարդ» թիմը՝ «Շիրակ» ՖԱ-ն է: Ֆուտբոլիստների միջին տարիքը՝ 24,38 է:

2020/2021 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի «ամենատարեց» թիմն նախորդ տարվա նման «Ալաշկերտ» ՖԱ-ն է (ֆուտբոլիստների միջին տարիքը՝ 27,50): «Ալաշկերտ» ՖԱ-ի կազմում գերակշիռ մաս են կազմել 30 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող ֆուտբոլիստները՝ 17 ֆուտբոլիստ:

2020/2021 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբներում հանդես եկած լեգիոներ ֆուտբոլիստներ



2020/2021 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբներում հանդես եկած ֆուտբոլիստներ և լեգիոներներ



ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

2020/2021 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների ակումբների 2020թ. ֆինանսական տարվա եկամուտները (հազար ՀՀ դրամ)



2020/2021 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների ակումբների 2020թ. ֆինանսական տարվա ծախսերը (հազար ՀՀ դրամ)



ՉԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ

ՆՈՐ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

2020 թվականին ՀՖՖ-ն մեկնարկ է տվել ենթակառուցվածքների հիմնանորոգման և շինարարության խոշոր ծրագրի: Ծրագիրը իրականացվում է ՈՒԵՖԱ-ի HatTrick Investment Projects- ի շրջանակներում:

Աբովյանի քաղաքային մարզադաշտի հիմնանորոգում

2021 թվականի ապրիլ ամսին մեկնարկել է Աբովյանի քաղաքային մարզադաշտի հիմնանորոգման շինարարական աշխատանքները : Մասնավորապես, տեղադրվելու է նոր խոտածածկ, վերանորոգվելու են մարզադաշտի տրիբունաները և հանդերձարանային հատվածները, բարեկարգվելու են մարզադաշտի հարակից տարածքները. կառուցվելու է մարզումային փոքր խաղադաշտ: Ըստ նոր նախագծի՝ արևելյան տրիբունան կունենա ծածկ: Տեղադրվելու է նաև լուսավորության համակարգ:
Շահագործման հանձնվելուց հետո մարզադաշտը կհամապատասխանի ՈՒԵՖԱ-ի երկրորդ կարգին: Դա նշանակում է, որ այստեղ հնարավոր կլինի անցկացնել ինչպես Հայաստանի Բարձրագույն խմբի, այնպես էլ միջազգային հանդիպումներ, մասնավորապես, ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների և Եվրոպա լիգայի որակավորման փուլի, Հայաստանի երիտասարդական ու պատանեկան հավաքականների մասնակցությամբ հանդիպումներ:Մարզադաշտը շահագործման է հանձնվելու 2022 թվականին:

Վանաձորի Լոռի մարզադաշտի և Արմավիրի Հոբելյանական մարզադաշտի հիմնանորոգում

Մեկնարկել են նաև Վանաձորի «Լոռի մարզադաշտի» և Արմավիրի Հոբելյանական մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքները: Երկու մարզադաշտերում էլ տեղադրվելու է նոր խոտածածկ, վերանորոգվելու են մարզադաշտերի տրիբունաները և հանդերձարանային գոտին: բարեկարգվելու են մարզադաշտի հարակից տարածքները: Մարզադաշտերի տրիբունաները կունենան նաև ծածկ:

ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍԱՅԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐ

2020 թվականին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան և VBET ընկերությունը, ընդլայնելով համագործակցության շրջանակները, նոր՝ բացառիկ պայմանագիր են ստորագրել:

Համաձայն նոր պայմանագրի՝ VBET ընկերությունը ձեռք է բերել Հայաստանի ֆուտբոլի Բարձրագույն Խմբի և Հայաստանի գավաթի խաղարկության անվանիրավունքը հաջորդ երեք մրցաշրջանների համար: Համագործակցության արդյունքում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան 2020/2021 թթ մրցաշրջանի համար VBET ընկերությունից ստացել է 400 միլիոն ՀՀ դրամ: Ըստ ձեռքբերված պայմանավորվածության՝ հետագա 2 տարիներին ամեն հաջորդ մրցաշրջանի համար նշված գումարը աճելու է 10%-ով:

Պայմանագրի համաձայն 2020/2021 մրցաշրջանից սկսած մինչև 2022/2023 Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնությունը վերանվանվել է «VBET Հայաստանի Պրեմիեր Լիգա»:



ՖԻՖԱ-Ի ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՃԱՆԲԱՐԸ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2021 թվականի Մայիսի 3-ից 9-ը Երևանում իրականացվել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի և ՖԻՖԱ-ի Հիմնադրամի համատեղ «ՖԻՖԱ-ի Հիմնադրամի Ճամբար-Հայաստան 2021» ծրագիրը: Հայաստանը ՖԻՖԱ-ի Հիմնադրամի կողմից ընտրվել էր որպես ծրագիրն իրականացնող առաջին երկիր:

Ծրագրի շրջանակներում ՀՖՖ տեխնիկական կենտրոն/ֆուտբոլի ակադեմիայում կազմակերպվել է մեկշաբաթյա ճամբար՝ անապահով ընտանիքների, ծնողազուրկ, հաշմանդամություն ունեցող երեխաների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և Արցախից տեղահանված ընտանիքների 12-14 տարեկան 100 երեխաների համար: Մեկ շաբաթվա ընթացքում երեխաները մասնակցել են զվարճալի ֆուտբոլային մարզումների և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների հիման վրա կազմված դասընթացների:շ

Շաբաթվա ընթացքում անցկացվել են միջոցառումներ ՖԻՖԱ Հիմնադրամի նախագահ Յուրի Զորկաեֆֆի, ինչպես նաև ՖԻՖԱ-ի մրցավարների բաժնի ղեկավար Մասսիմո Բուզակայի մասնակցությամբ: